# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/35 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

**17 հունիսի 2026թ.**

2026թ. մայիսի 27-ից հունիսի 17-ը ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/35 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մովսիսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Խ. Մելիքսեթյան՝ | Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն, |
| Մ. Գևորգյան՝ | Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի կիրառական երկրաֆիզիկայի և գեոմոնիթորինգի լաբորատորիայի վարիչ ժ/պ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի հայտը գնահատելու մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-Ի ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. 2026 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողովի քարտուղարը նիստը կասեցնելով https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ին ծանուցել է

անհամապատասխանությունների շտկման առաջարկ հետևյալ բովանդակությամբ. «… Սույնով տեղեկացնում ենք, որ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/35 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անճշտությունները. «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը հաստատված են մի անձի կողմից, ում նման լիազորություններ վերապահված չեն: Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկում ենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և https://eauction.armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը…»:

2. Նիստը կասեցնելուց հետո «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում համակարգի https://eauction.armeps.am/ միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակներն ամբողջությամբ: Մասնավորապես՝ 05.05.2026 տրված լիազորագիրը և 05.05.2026 թվականի պաշտոնական պարտականությունների կատարումը հանձնարարելու մասին հրամանը Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված կարգով հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Դրանով պայմանավորված, ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Կ. Ղարիբյանի կողմից ՀՀ Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հարությունյանին 05.06.2026 թվականին գրություն է հասցեագրվել, որով խնդրել է տրամադրել պարզաբանում այն մասին, թե արդյո՞ք էլեկտրոնային թվային ստորագրության բացակայության պայմաններում Պատվիրատուն կարող է հիմք ընդունել ներկայացված փաստաթղթերը և շարունակել հայտի գնահատումը, թե՞ ոչ: Նշված գրությանն ի պատասխան 15.06.2026 թվականին ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանը հայտնել է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ (նշված գրությունների արտատպված տարբերակները կցվում են սույն արձանագրությանը):

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026 թվականի հունիսի 17-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի, 41-րդ և 42-րդ կետերի, Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով լիազոր մարմնի կողմից տրամադրված խորհրդատվական կարծիքը, Ընթացակարգի մասնակից «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի հայտը գնահատել որպես անբավարար և մերժել:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել Պատվիրատուի ղեկավարին, իսկ նշյալ կետն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

4. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026 թվականի հունիսի 17-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-ին կետով սահմանված պահանջները Ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մովսիսյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Խ. Մելիքսեթյան

Մ. Գևորգյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան